3408

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«05» 04 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 043 - 24

Ձեռնարկողը՝ **Գուրգեն Վազիրի Սադոյան**
Նոր Գեղի բնակավայր, Աղբյուրակի 36 փուն

Գործունեությունը՝ **Ավտոմեքենաների հեղուկ գազի, հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**
Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Գետամեջ բնակավայրի 1-ին փողոց թիվ 38 հ.

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 043 - 24

«05» 04 **2024թ.**

Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Գետամեջ բնակավայրի 1-ին փողոց թիվ 38 հասցեում ավտոմեքենաների հեղուկ գազի, հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի և վարչական շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	Գուրգեն Վազիրի Սադոյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզի, Նոր Հաճըն համայնքի, Գետամեջ բնակավայր

Ներածական մաս. Ավտոմեքենաների հեղուկ գազի, հեղուկ վառելիքի (բենզին, դիզելային վառելիք) լիցքավորման կայանի և վարչական շենքի կառուցումը նախատեսվում է Կոտայքի մարզի Գետամեջ բնակավայրի 1-ին փողոց թիվ 38 հասցեում: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ 4-րդ մասի, 6-րդ կետի «բ» ենթակետի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:
Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել գործունեության նախագծային փաստաթղթերը:

- Տարածքի սեփականության իրավունքի վկայական՝ N 28122018-07-0013
- Ճարտարապետահատակագծային առաջադրանքը N61 24.03.2023 թ
- Հնագետի եզրակացությունը
- Հողի նպատակային նշանակությունը բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման

Նկարագրական մաս. Հողամասի մակերեսը 0.69945 հա է: Նախատեսվող գործունեության ենթակա տարածքը գտնվում է Գետամեջ բնակավայրի 1-ին փողոց թիվ 38 հասցեում, որը հարակից է Մ-2 միջպետական մայրուղու եզրին: Կառուցապատվող տարածքը իրենից ներկայացնում է արդեն իսկ խախտված տարածքի վրա կատարված հողի լիցք, որի մակարդակը հավասար է Երևան-Սևան

մայրուղու ճանապարհի հարթությանը: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է սեփական տարածքում, որտեղ կառուցվելու է վարչական շենք, լցակայան, տրանսֆորմատորային ենթակայան, ավտոկայանատեղի:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում բացակայում են: Կառուցապատվող տարածքում տարածված են խճաքարային, տեղ-տեղ կարբոնատային լիցքային գրունտների ձևով հողերը, որտեղ բուսածածկը և հողածածկը գրեթե բացակայում են և հնարավոր չէ շինարարության ընթացքում բուսաշերտը հանել և պահեստավորել:

Կառուցապատման տեխնիկա-տնտեսական ցուցանիշները.

Վարչական շենք - շինությունը մեկ հարկանի է 4.0 մետր բարձրությամբ 120.0 քմ ընդանուր մակերեսով: Վարչական շենքը բաղկացած է թվով 1 մարկետից, թվով 1 սպասասրահից, թվով 3 սանհանգույցներից, թվով 3 աշխատասենյակից, թվով 1 միջանցքից և թվով 1 հանգստի սենյակից: Կառույցի կառուցվածքն իրենից ներկայացնում է ե/բ միաձույլ կարկաս, ծածկը մետաղական կոնստրուկցիայով, արտաքին պատերը կառուցվում են տուֆի ամրանավորված կանոնավոր շարով, դիմային և կողային ճակատները երեսպատվում է ալյումինե /Alikabond 4մմ 0.4/0.4, 1.22x5.7/թիթեղներով, իսկ մյուս կողմը տուֆի կանոնավոր շարվածքն է: Շենքի խարսխապատերը, նախատեսվում է երեսպատել բազալտի մաքրատաշ սալերով: Տանիքը միաթեք է, մետաղի կառուցվածքային տարրերով, գոլորշամեկուսիչ և ջերմամեկուսիչ շերտերով, լաքաներկած ծալքաթիթեղի /ԿՊ25/ տանիքածածկով, կազմակերպված, արտաքին ջրահեռացումով: Լցակայանի ծածկ - 285.0 քմ մակերեսով, 5.5 մետր բարձրությամբ, 7.5մ լայնությամբ և 38.0 մ երկարությամբ: Կառույցի կառուցվածքն իրենից ներկայացնում է մետաղական կոնստրուկցիայով կարկաս, դիմային ճակատները երեսպատվում է Ալյումինե Alikabond 4մմ 0.4/0.4, 1.22x5.7/ թիթեղներով: Տանիքը միաթեք է, մետաղի կառուցվածքային 8 տարրերով, լաքաներկած ծալքաթիթեղի /ԿՊ25/ տանիքածածկով, կազմակերպված, արտաքին ջրահեռացումով:

Ստորգետնյա պահեստարաններ նախատեսված հեղուկ գազային և նավթային վառելիքների համար: Կառուցվածքն իրենից ներկայացնում է մետաղական կոնստրուկցիա, ե/բ հիմքերով: Տրանսվորմացիոն ենթակայանը և ջրահեռացման հերմետիկ հորը կկառուցվեն համաձայն տեխնիկական պայմանների: Ավտոկայանատեղին կառուցվելու է մեքենաների կուտակումից խուսափելու համար: Օպերատորային շինությունը մեկ հարկանի է 4.0 մետր բարձրությամբ 120.0 քմ ընդանուր մակերեսով: Փակ սենքերի համար նախատեսվել է ներածման-արտածման օդափոխման արհեստական համակարգեր: Սենքերի վերին գոտիների հաշվարկային օդափոխանակության ապահովման համար ընտրվել է բնական օդափոխում դեֆլեկտորների տեղադրմամբ: Հրդեհի առաջացման դեպքում, պայթյունավտանգ

ՓՈՐՁԱՓՐՈՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

գոտիներով սենքերում նախատեսվել է էլեկտրամատակարարման տեխնոլոգիական սարքավորման ավտոմատ անջատում և օդափոխման սարքավորումների կենտրոնացված անջատում: Նախատեսվում է կատարել ստորգետնյա մետաղական տարաների տեղադրում 2 հատ 20 տոննա, 2 հատ 5 տոննա, և մեկ 10 տոննա տարողականությամբ:

Եզրափակիչ մաս. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի և ՀՀ կառավարության 1325-Ն որոշման սահմանված պահանջների՝ հանրային ծանուցումը և քննարկումները կատարվել են Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Գետամեջ բնակավայրի վարչական շրջանի ղեկավարի նստավայրում: Հանրային քննարկումների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առարկություններն, առաջարկություններն և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, քաղաքաշինության կոմիտեն, Կոտայքի մարզպետարանի աշխատակազմը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակված տարբերակում: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծության համաձայն, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կլինի թույլատրելի նորմայի սահմաներում, քանի որ շինարարական աշխատանքների ազդեցությունները իրենց բնույթով սահմանափակ են և կրում են ժամանակավոր բնույթ: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից: Նախնական ուսումնասիրությունների եւ ներկայացված տվյալների նույնականացման արդյունքում նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանիներ չեն հայտնաբերվել: Տարածքում ծառեր և թփերը բացակայում են: Նախատեսվող գործունեության տարածքում բնության, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ չեն հայտնաբերվել: Նախագծի իրականացումը համաձայն հնագետի տրված եզրակացության հնագիտական և պատմամշակութային առումով ռիսկեր չի պարունակում: Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, շինարարական աղբն է /50խմ ծավալով/, որն ամբողջությամբ կտեղափոխվի Նոր Հաճըն համայնքի հետ պայմանագրային հիմունքներով հատկացված վայր: Շինարարական աշխատանքներում նախատեսված է ընդգրկել մոտ 17 մարդ :

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է լցակայանի տարածքը կանաչապատել և բարեկարգել: Այս աշխատանքների շրջանակում նախատեսվում է՝ երթևեկելի հատվածների, անցուղիների ասֆալտապատում, մայթերի

ստեղծում, բազալտե եզրաքարերի իրականացում: Նախատեսվում է 50-80քմ կանաչապատ տարածքի հիմնում CO^2 արտանետումները նվազեցնելու համար: Շրջակա տարածքում այլ շինություններ, ենթակառուցվածքները բացակայում են: Ավտոմեքենաների լցակայանը մեկուսացված է բնակելի տարածքներից՝ շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

-Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացնել շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

- Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կիրառել շինարարական աղբի հեռացման համար: Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում, մինչ տեղափոխումը և ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով:
- Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով:
- Շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը և այլն) տեղափոխումը իրականացնել փակ ծածկով մեքենաներով:
- Պայթյունավտանգ գոտիներով սենքերում նախատեսել էլեկտրամատակարարման տեխնոլոգիական սարքավորման ավտոմատ անջատում, հակահրդեհային՝ փոշային և փրփրային կրակմարիչներ և օդափոխման սարքավորումների կենտրոնացված անջատում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գետամեջ բնակավայրի 1-ին փողոց թիվ 38 հասցեում ավտոմեքենաների հեղուկ գազի, հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի և վարչական շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝ Շուշանիկ Կարապետյան